

մանց Պաւագանին ջուրք լուացեալ զաղտ զոգւոց մկրտելոցն՝ լուսազարդեալ Նորոգեն², եւ զարդարութեան թշնամին հանդերձ գործովք հին մարդոյն³՝ յայրիչ հուր անանցական փոխեալ կիզուն:

8 Եկեղեցւոյ սիրիչք, առաքելոցն որդիք, Զրիստոսի արեան գինք. մի՛ ծառայեցուցանէք զոգիս ձեր երկիւղի մարդկան. «տո՛ւք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ»⁴. յեկեղեցիս ւարհնեցէք զԱստուած, եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի⁵: 9 Ահա սիրեցէք զեկեղեցի⁶, եւ սիրեցայք յեկեղեցւոյ. զթագաւորս քաղցրացոյց եկեղեցի. զգազանս ընդելացոյց, զգայլս գառնիս արար. զձեզ պայծառացոյց, զթշնամիս ճշմարտութեան ամաչեցոյց:

10 «Այլ ես այսաւր առ ցնծալ սրտիս եւ ուրախանալ մտացս, համբարձեալ զձեռս ի յերկինս՝ ընդ ծերոյն Դաւթայ աղաղակեմ առ Աստուած՝ զոր ինչ դրուատեաց գոհութեամբ Նա յաղագս որդւոյն իւրոյ Սողոմոնի մատուցանէր Աստուծոյ բարձրելոյ⁷. Աւրհնեալ Է⁸ տէր Աստուած⁷ Իսրայէլի, որ ետ ինձ ի զաւակէ իմմէ Նստել յաթոռ իմ, եւ աչք իմ տեսանեն⁸: 11 Ձայնակցելով ընդ մարգարէին՝ ասեմ զնոյն եւ ես. «Աւրհնեալ տէր Աստուած Իսրայէլի, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս որ ինձ հաւատացաւ՝ պատուով շքեղութեամբ պայծառացեալ ի Զրիստոսէ: 12 Զրեայքն պապանձեսցին, ուրացողք ամաչեսցեն: 13 Փախեաւ Ադոնիա, որ առանց Աստուծոյ կարծեր թագաւորել. աւզնականացն զգեցեալ զամաւթ՝ սալարեալք ընդ սեղանովն թագչին: 14 [Թագաւորեցին, ասէ, եւ ոչ ինեւ, դաշինս կռեցին՝ եւ ոչ իմով կամաւ⁹]: 15 Ո՛ր ես առանց Աստուծոյ գոռոզացեալքն. ո՛ր ես առանց Աստուծոյ իշխանացեալքն. ո՛ր ես արիւնահեղքն. ո՛ր ես պոռնկասերքն. [Տո՛ւր ինձ, ասէ, զԱբիսակ Սոմնացի⁹, եւ զԱստուած ոչ ինորեցին, եւ զՏէր զաւրութեանց ոչ ճանաչէին¹⁰]. ո՛ր ես եկեղեցւոյ թշնամանիչքն, առոտնհարուք⁸ աւ-

1 Ձ. զաւագանին... ոգւոց

2 ՁԱտ. Նորոգին

3 Ձ. մարդոյն

4 Մատթ. ԻԲ 21. Մարկ. ԺԲ 17

5 Սաղմ. ԿԷ 27

6 ՏՏ. զեկեղեցիս

7 ԲԳտ. բարձրելոյ՝ բան

8 ՏՏ. չիք ես

7 Ձ. օրհնեալ ես տէր աստուած

ա Չ Թագ. Ա 48

Բ Ովս. Ը 4. Ես. Լ 1

9 Չ Թագ. Բ 17

10 Ես. Թ 13

8 Ձ. առոտնհարու